EUROPEAN UNION FOR ARMENIA

Առողջապահության Նախարարություն
Ministry of Health of the Republic of Armenia

# ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՈՒՐ ՄԻՋԻՆ ՕՏԻՏԻ ՎԱՐՄԱՆ ԱԼԳՈՐԻԹՄ

## ՀԻՄՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ ԵՎ ԱԽՏՈՐՈՇՈՒՄ

- **Այտուց/ցավ մաստոիդ (պտկաձև) ելունի շրջանում**
- **Ցավ ականջում**
- **Դյուրագրգռվածություն**
- **Լսողական անցուղուց արտադրություն**
- **Տենդ**

### ՕՏՈՍԿՈՊԻԿ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Թմբկաթաղանթի հիպերեմիա**
- **Արտափքվածություն**
- **Արտադրություն**

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**1** **Պտկաձև ելունի շրջանում այտուցի և ցավի դեպքում** ուղեգրել հիվանդանոց սուր մաստոիդիտի կասկածի կապակցությամբ:

**2** **Ցավի դեպքում** տալ ցավազրկող:

**3** **Նշանակել հակաբիոտիկ հետևյալ դեպքերում.**
- առկա են չափավոր կամ ուժգին ականջացավ, օտոսկոպիկ փոփոխություններ, տևում է 48 ժամ և ավելի և մարմնի ջերմաստիճանը բարձր է 38,5°C-ից, թարախային արտադրություն ականջից,
- երկկողմանի սուր միջին օտիտ մինչև 2 տարեկան երեխաների մոտ,
- առկա են ռիսկի գործոններ (իմունանբավարարության վիճակ կամ քրոնիկական/ծանր հիվանդություններ):

**4** **Այլ բոլոր դեպքերում,** եթե ցավը տևում է 48 ժամից պակաս, մարմնի ջերմաստիճանը 38,5°C-ից ցածր է, չկա երկկողմանի բորբոքում (մինչև 2 տարեկան երեխայի մոտ), չկան ռիսկի գործոններ՝ ծնողին առաջարկել հսկել 48 ժամ, ինչից հետո գնահատել վիճակը և կայացնել որոշում՝ հակաբիոտիկ նշանակելու վերաբերյալ:

**5** Որպես առաջին ընտրություն՝ նշանակվում է **Ամոքսիցիլին 3–7 օր**, պայմանավորված հիվանդության ծանրությամբ, միա- կամ երկկողմանի ախտընթացով, արտադրության առկայությամբ:

**6** **Եթե երեխան վերջերս ստացել է Ամոքսիցիլին կամ նախկինում հաճախակի է ստացել հակաբիոտիկներ՝ Ամոքսիցիլին+կլավուլանատ:**

**7** Երկրորդ ընտրություն՝ ցեֆալոսպորինային խմբի 2-րդ և 3-րդ սերնդի դեղամիջոցներ:

**8** Եթե ականջից արտադրություն է գալիս, անհրաժեշտ է օրը մի քանի անգամ այն չորացնել մաքուր բամբակով, հասանելիության դեպքում ուղեգրել քիթ-կոկորդ-ականջաբանի մոտ խորհրդատվության:

**9** **Բացառել ջրի ներթափանցումն ականջի մեջ:**

**10** Անհրաժեշտ է լվանալ քիթը և ապահովել ազատ քթային շնչառությունը:

**11** Բացատրել վտանգի նշանները (հնարավոր բարդությունները) և տնային խնամքը:

**12** Վերագնահատում 48 ժամ հետո. եթե երեխան չի ստացել հակաբիոտիկ, նշանակել այն, եթե ստացել է և չկա վիճակի լավացում՝ փոխել հակաբիոտիկը կամ ուղեգրել քիթ-կոկորդ- ականջաբանի մոտ խորհրդատվության:

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ և Առողջապահության համաշխարհային կազմակերպության եվրոպական տարածաշրջանային գրասենյակի օժանդակությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Առողջապահության նախարարությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության և Առողջապահության համաշխարհային կազմակերպության տեսակետները

ԱԱԻ